


վարժութեամբ կը խօսի, իր լեզուն ամեն նալա գիտնալով հանդերձ, եթէ անոով խօսելու համար մասնաւոր Պրթութիւն մ'ըրած չէ և եթէ այս հրահանգին հետ՝ ստացած չէ միանգամայն մտաւոր արթնութիւնն և լա խօսելու հարկաւոր եղած մեքենական դիրութիւն իբրև յանկարծադէպ շարադրութիւն մը՝ իսկոյն պիտի բզանէ անոր հարկաւոր եղած յատուկ բառերը, իր իմաստները պիտի այլափոխէ, դժուարութեամբ ու դժգոյն պիտի խօսի՝ ամէն քայլին երբալով և խոչնդոտի մը հանդիպելով:

Տես, ուրեմն որչափ հարկաւոր է որ, ամէն բանէ առաջ, ինքզինդ լա խօսելու վարժեցնես. և կ'ըսեն, ամէն բանէ առաջ, վա՛ն գի կրթութիւն մ'է որ օգտակար կերպով կրնաս սկսիլ նոյն իսկ լեզունն նախնական տարրերը սովորելէ առաջ՝ այն եղանակով զոր յետոյ պիտի տեսնենք: Հիմա մարզանքի նախազիտելիքներու վրայ խօսիմ, յետոյ կ'անցնինք բուն գործիքներուն վրայ:

(Շարունակելի) Թորգ. Յօրէն. Հ. Ա. Յովս.



ԱՅԳՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ

□ □

Լուսամուտիս երբ մութ փեղկերը բանամ,

Ու վարդամատն արեգական

Երփաներկար ըսքանչիւթը տեսնամ,

Ո՛հ Արշալոյս Հայկալոյս

Քեզ յիշելով՝ խորատուզուած կը խոկամ...

Թեթևաշունչ թափառական թե՛ն ամպի,

Ծիրանազարդ գեղափայլ,

«Խըղճա՛, կ'ըսէ՛, հայրենասէ՛ր վեհուգի,

Քաղցրանուագ բերս դալկալոյ

Ի Հայաստան կը հնչէ... Կենքը կ'եփի:

Յաւերժանարս Մասիսն անբուն, մայր զըթամ,

Գեղաշնորհ դուտար Երկնից,

Ծիսածաղիկ պատմունաներ. ըզգեցած,

Յոյսի հրմայք ոսկեգիծ,

Կը ծիծաղի սիրալորգոր բերկրաւէտ...

Այ՛ մոռացի՛ր ցաւերդ հին դանապէտ...:

Հ. ԳՐԱ. ԱՅՐԵՆԵԱՑ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

(նախ՝ էջ 125)

1. — ՓՈԹՈՐԿԻ ԵՐԳԵՐ, (1915-1919), Յովս. Պօղոսեան. Տպագր. Մ. Յովսէփեան, Պոլիս, 1920 (փոքր էջ 61): «Գրիկ երեք քոյրս՝ տիկին Սիւսիկն» (էջ 3): Ընթերցողը պէտք չէ կանգ առնէ այս երեսին վրայ, ուր՝ ակներև է սխալը բանաձևին (քոյրս՝ պէտք էր ըլլալ քրոյս), — որուն նման անյաշող կազմութիւններու կը հանդիպինք երբեմն նաև օրագիրներու և այլ հրատարակութեանց մէջ:

Պրն. Պօղոսեանի գրիչը, սակայն, ստանուն տաղաչափութիւն մ'ունի, և բառական բնակաւնութիւն իմաստներու: Ահաւասիկ իր նախերգը, իբրև նմուշ.

ՓՈԹՈՐԿԻ ՊԱՀՈՒՆ

Հին կաշնի մ'ոտարի կառնէ ազազուն,
Ձոր կը սարսէ մորկն ուզին արմատեն,
Կ'երգէ թռչնիկ մը վիտուր զոգչոյուն,
Անփոք թէ շանթը կը սուրայ իր մօտէն:

Գուցէ պա՛ն մ'եռք ճակի կաշին տազաւի,
Փուլ տայ երկից կայծակներու բռնին տակ,
Կը գոգոցէ սակայն թռչունն անձկաւի,
Ձի նշմարեց հետուն անկիւն մը յատակ:

Գուցակեց այդն ետին ամպի մը խաւար,
Եւ կ'երազէ ճամբան խաղաղ իր բոյնին,
Ուր կը սպասէ իրեն դեռ ոչ մը զաւար:

Իս թռչունն եմ ջրհալատուած փոթորկին,
Իւ սիրտիս մէջ հազար վերքեր կ'արիւնին.
Բայց յայտով լի վազուան երազը կ'երգեմ:

2. — ՔՕԼՈՄՊԱ, գրեց՝ Փրօսիք Մերիմէ, — թարգմանեց՝ Յ. Դովիկեան: Վերջնայն Նախաւրանը՝ անաւասիկ.

«Հետեւեալ պատմութիւն Քօրսիքական ժողովուրդին կեանքն ունեւած գեղեցիկ դրուագ մ'է որ մեր ազգային կեանքի տեսակէտէն մեծ աշխտութիւն մը ունի:

Քօրսիքան աննշան կզգի էր մեր ծնած ու մարդկու, թեան նուիրած իր մեծ զաւակին՝ Նարոնէնին՝ համար նշանաւոր եղած է: Սակայն ինչ որ մեզ աւելի էր հետաքրքրեց այդ կզգի ժողովուրդին առանձնապատուկ սովորութիւններն են: Քօրսիքացիին համար ընտանեկան պատերազմն բանէ բանէ գեր է վեր է: Սոսկալի է վրէժխնդրական ոգին այդ կզգի զաւակներուն մէջ: Քօլոմպա, պատմութեան հետազոտիչ՝ այդ վրէժխնդրական զգացումին կեանքում մէկ պատկերացումն է. իր սիրելի հօր սպա, նութեան վրէժը լուծելու համար գտնի իր ծաղկերը, ծնող առած վարդաւորութիւնը, ցուցուցած անկախ ու յանգուած ոգին իրօք որ միայն մեր հիացումին արժանի են:

Որքան սիրելի է այդ նոյն ոգին ու նոյն կորովը տեսնել նաև մեր Հայ օրիորդներու և մայրերու մէջ: Սրբազան վրէժխնդրական ոգին միակ փրկարար և խաղաղարար միջոցն է այլապես ու թշնամի ժողովուրդներուն մէջ ապրող մեր Հայ ժողովուրդին փառքը:

Որքան արեւներ, որքան խոգութիւններ, որքան

անպատուութիւններ ինչպոտեան պիտի ըլլային մեր ազգին հէջ ակն ընդ ականի որբազան վարդապետութեան օգին մարմնացած ըլլաւ մեր մէջ 》

3. — ԿԱՐՄԻՐ ՍԵՐՈՒՅԴՆ, Քերտուածներ երուանդ Մեսիանան: Պարունակութիւնն է՝ — Հայաստանի պերսեանի (արմազ) Marcelle Messiaian: — Գրաներու շարքը, — Մետուսանի երգք, — Թուրք կայսրը, — Հայրենիքի սեր, — Արևի, ակերի արևին, — Մարդկութեան ճայել: Աստուծոյ ճայնն է, — Արեւին որ պաշտեցիր, — Մարգը... անցնող Քուրան, — Վարդեր, — Վարդեր, Որին, — Անուշի շուքեր երգածնք երգիր, Պատարանները, Կենսքը, — Սկիւտը, — Գեղձանիւր, — Երջանկութիւն, — Հին, բարի դէմերը, — Մանուկը, — Հողին դարձի, — Ճակատաբեր, — Գեղեցկութիւնը, — Ֆիւլման ե Պոստ (Ճաւրան ե պապուկը), — Կարմիր Սերունդը, — Դրախտ կորուսեալ:

4. — ԴՐՈՒՇԻՆ ՏԱԿ անունը որ ինկան ե անոնք որ իր մկան: Անաստիկ, ազգային ծանօթ ե ան. ծանօթ գործիչներու մասին հետաքրքրական հատոր մը, հետեւալ Յաւաքայանով

Դեղիկայ աշխատութիւնը, զանաւորութեան ե սերոյ ապացոյց մըն է միայն՝ հնչեղ բոլոր այն յեղափոխական ընդհանրութեան, որոնք կրցած են թէլ թէլ շատ անձնապէս ճանչնալ:

ԴՐՈՒՇԻՆ ՏԱԿ ակտը որ որ ներկայացնէր նաև, ինքն անձնօթ մնացածներ ալ, անոն որ կառուելով մարտիրոսուեցան, — Գարեգին Զիքեան՝ առաջնալէ ճշմարիտ մարմնացումը. Միս-Շանեհ՝ հայոց սարերուն նման ազատ. Զարեհ Գոյանեհ, իսկական լեռնոյ մը՝ որ նախնաբեր զուգուի իր ժողովուրդին հետ, ապրելով հանրութեան ամենին արկածալից ու անձնուրէր. Կարապետ Բաղդասարեան, անուշ ե հրապարակ խորհրդաւորը. Ստեփան Արշալուեան, յաճուող ե բարձրագոյնը. Ան հիկ՝ հայ օրիորդներու ամենին լոյսին ու գործունեան, հայ չեղուտիներուն ամենին անկեղծն ու խոնարհը:

Արշալուեան մէջ, ամենի ուղիք իջեղ՝ Վառն Շանի-ճան՝ ներսուն ու կուտ զարգէր զոր կը յուսանէր որ մը կրկին անսնել. Տըթ. Սմբատ Բաղդասարեան, որ զնացեր էր կրկնելով մէջ յեղափոխական ճշմարտութեան ցարդ զինն ըլլաւ. Յով. Աթաբեան ե Վարդանան որ կարմիր ուսկանին բանաճ ճաշակեցին՝ լոյսի, համեստ ու անվար. Մանուկ Եղիսեան՝ որ ճշմարիտ յեղափոխականի գործ առնաւ արիւարոր. Ալայան ու Առքիբ, Ան-փանարեանն ու Թիքիսեանը եւ քան Արշիլներ. — ասոնց բոլորն ալ ժող մե մեր սրտերուն:

ԴՐՈՒՇԻՆ ՏԱԿ, ասկայն, լոյ գրական ուրուագծի՞ ներ պատմականօր զոր մըն է ե կուտանքական փորձա-կանուն համար չէ գրուած, թէի, կարի բաշտայնը որ՝ այս անկեղծութեամբ ե անկեղծականութեամբ գծուած ղէմքերը՝ օրինակ անունին, ու, իրենց շնորհիւ, մեր բոլոր կամեցողութեամբ փորձանքան ըլլած ըլլայինք՝ մեր յեղափոխական կառուցողներ, որուն համար ամենին կարեւորներ իրենց զանաք զոհեցին:

5. — ԻՍՐԱԲՈՎԱՅԻՆ կամ ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐԻ ԵՐ-ԳԱՐԱՆԻ: Քերթնեք ե եղանակեց խորով: Տպագր. Կ. Յ. Դերսէս, Փարիզ, 1920, (մեծին էջ 47, գինն է՝ 6 ֆրանք) Էր պարունակէ ծայնագրուած հետեւեալ տառաւորները՝ — Տաղ Հայոցընալ: «Դ՛իտրեան ինկացոյ» Արշալու Տպագրիկ: Քիւ-գի, ո՞վ «Դ՛իտրիկ»։ Սիրտ սն, մայրիկ: Երեւնի մայր, կայանաւոր գաւախիդ: Եմբինին որդի: Վերադարձը: Կայապեղդ: Հայ որիկն սղեղար: Հայ աղիկին ի դաշտին մարտի:

Կիսիէն առաջ: Ա՛յ հերիք: Մէկ պալիկիդ փոխարին: Յնձնեղք՝ պայտը... Էկեր, մեր ե ու յախ լէր: Պատուեալ զնայր քո... Հայ աղիկիդ երգ: (Խորատ քարով, զատ քարով):

ԵՐԻՈՒ ԽՈՍԳ: — Հայ լեզուի Մասունք-քանի ներքն Չայաբուութեան նշանն է (?), զոր հայ Չայան-գրութեան մէջ ալ կը գտնենք խորագրակն անուշով: այս բարեբախտ զուգահեյզութեան մեր անուան ճեմ: Թիւղդեք մեկ թՈՐՈՐԻԱՅԻՆ անուանել Տարագրի Երգարան:

Անտիկ չէ իրենցնէ նաև որ (?) նշանը, արտայայտէ, աղբիւր, հատուի, մեծամիջակ զգացման ե յոյսի, պատշաճօրե կը յատկանշէ երգերուս օգին: Կուրական պարագ կը համարիմ անկեղծ երախտա, զիտութիւնն յայտնել այս առիթով շնորհալի տիկին Օպիէ (Mrs Obee) ե Պ. Քենեդի (E. W. Kennedy) որ հանգեան նուիրել մեզի իրենց արուեստագուծ աշակ-ցութիւնը երգերուս դաշնաւորութիւն բաժնին մէջ:

1913-1919

ԻՍՐԱԲՈՎԱՅ

6. — Կոր դասագիրք ՀԱՅՈՑ ՊԱՏԻՐԻԹԵԱՆ, Ա. տարի: Բազմաթիւ պատկերներով ու քար-տէտով: Պատարտեց՝ Կ. Յ. Բասումշեան: Գ. տպագրութիւն, կրկին փոփոխուած: Կ. Պոլիս, Գրատուն: Պ. Պալեան, 1920, (փոքր էջ 90): Գին՝ 25 դր.:

ԵՐԻՈՒ ԽՈՍԳ: — Բուրովին նոր ուճով դասագրք. քերու պարտաւորութեան պէտքը շատեղ զգալի կըստ էր մեր մէջ, և պարտ կը համարէր խտտովանել: Եւ նոր գրութեամբ՝ զատագրեցրու զատարտութեան ձեռնարկներ ալ եղան, զանազան ճիւղերու համար, բաց ի Հայոց Պատմութիւնէ, որուն պատարտութեան ինքն մը զինակի այսօր, առաջարկութեամբ Տնար Պ. Պալեանի, որ այնքան օգտակար կատարակութիւններ ունի մեր զարդերներուն համար:

Երկայ դասագրքը թնական գործ մը չէ, այսօրեց՝ նորայնի հետաքրքրութիւններու համարեղ պարտաւորութեան ըլլալով ճանչցիմք՝ քորտովին փոխուած Հայոց Պատմութիւն մը չէ, բայց իր անանգով եղանակով աշակերտը պատարտաւորու կուտան: Եւ զատագրեցի Բ. ե մանաւանդ Գ. տարիներուն մէջ դիւրին կերպով բարձր ենու ինչ որ ետր է ե քննական:

Որպէս իր աշակերտն ասունք ծանոթով կրկին իր ազգին պատմութիւնը սիրով կարդայ, ամեն մէկ զուտին կրկին մասի բնութեց, — առաջինը՝ խիտ համաժող, իւրեկ Դոս (lecon), իսկ կերպորդ՝ թէլ էր բնագրական, իւրեկ պատմած (récit): Այսպէսով աշակերտը նախ Դոսին մէջէ բոլոր բուտաններ արդարեղապէս զոց կ'ընէ, ե ետքը Պատմութիւն անցնելով, սորակե Դոսին մէջ հանդիպած ե կամ անոր հետ կապ ունեցող պատմութեան կարեւոր ղէպք մը ծանոթանալութիւնը կը կարդայ, հետաքրքրութեան մղուած: Ուսումը հանելի ընծայելով է, որ կարեւոր կ'ըլլայ մաշել առաջ աշակերտին Այս ե Երազայի մէջ ընդունուած ճիմաման գրութիւնը:

Բնական է, այս տեսակ համաժող դասագրքի մը մէջ կարեւոր չէր ասանգի մեր ազգին բարձր պատմութիւնը. այն պարտալիքն ոչ միայն մանկավարժական չլիտի ըլլաւ բարձր, այլ ե պէտք պիտի ըլլար մի միայն անուն. նոր ու իտականներ յիշելով անցնելի: Հոս իմ ղիտաւոր նպատակն եղան է՝ մեր անցնող փառաւոր ու նորն իսկ իտուր օրերուն ամենին նշանաւոր ղէպքերն իտուր ըլլայելով, աշակերտին ճանչցնել ու սերգնել իր ազգը:

Պարիս 1 Եւնով. 1909

Կ. Յ. Բ.

Բ. տպագրութեան առիթով ըսելիքս միմիայն թուա-կաններու մասին:

Թուական չեմ դրած այս Ա. տարուան մէջ, նկատելով որ փոքրիկ աշակերտը դեռ չի կրնար ըմբռնել հին դէպքի մը թուականը:

Իրան է, դասադրեմ վերջին մասին մէջ դրած եմ մէկ երկու թուականներ, բայց անոնք շատ թարմ դեպքերու առիթով յիշած եմ, հետեալքը՝ մարտի:

Պարիս, 1910

Կ. Յ. Բ.

7. — ՀԱՅ ԲՈՇԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ, Գ. ՏԵՂԵԿԱՊԻՐ, պատրաստուած՝ աստեղագիր Տգոթ. Էյդ. Շահպազէ, և կարողուած Թ. Բոյ տարեշրջանի սկիզբը, 1920: Տպ. Ֆ. Ճարեան, Բերա, Բարձագ զարու Աթրիզա խան թիւ 12 (Կ. Պոլիս): Փոքր. էջ 28:

8. — ԽՈՒՎԻՔԻ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԵՐԳԵՐ [Մ. Ոսկեան] Գիշերային ձեռնարկներ, 1919, տպ. Արամ Ասեփասեան, Աղքատանդրիա — Մարտի թուղթի վրայ, էջ 178, հետեալ պարունակութեամբ. — Գլխաւոր (Սուրէն Պարթեանէ):

Ա. ՀՈՒՎԻՔԻ ՃԻՉԵՐ. Առեւտրին. Ջուլուսի աշխարհը. Երբեք. Տէր էլ Ջոր. Մահաւան ճանապարհը. Խառնարին մէջէն. Հայրենիքի հովիւ. Աղտաններ. Վրէժին սերունդը. Արարա. Վրէժին ժայռը:

Բ. ԳԻՇԵՐԱՅԻՆ ՀԵՄԿԼՏՈՒՔՆԵՐ. Գիշերային ճեղքաւոր. Փշուած ճեպը. Երազիս աշխիւ. Աշունը Լըռու. Կեդրոս արեւուն վրայ. Քունը. Այլ մը անդրի. Քարթը. Ա՛լ ամեն բան լնացաւ. Գիշեր ինչու. Բանս սէր չուր. Գուն ամեն ոյժ... Այսոր ներքին. Քաղաքի շուրս. Ջոր փորձեցի. Ո՛չ չեմ տեսնար. Յուսահառութեան. Պիտի ուզէի մահանալ. Կտախտներին մէջ. Միտմունքի նամակ. Տնոր ժամը. Պայտան կողար. Երգականներ մէջ. Թիթեանիկ. Երեք էնք. 5 ՅՈ. Ա՛լ երգ չունի. Թաղու. Բարեկենդան. Անկուս. Վերջին շուն. Պ. Ուրիշ Հայրենային. Ամեն տեղ. Հուսկ բանը. Վրիպաւոր. Ցանկ նիւթոյ:

9. — ՈՒՇԻՆ ՎՃԻՌԸ, քաղաքագործին երկու արարուածով [Օսնիկ Շէրտանեան] Բարիք, 1920 (փոքր էջ 32, գինը՝ 2 ֆրանկ):

Պ Ե Պ Ի Լ Ո Յ Ս

Առաջ ընդմէջն — Կընթանայ անդու
Լեռաւ յայտնուս — Կառուի խորիւս:
Կըսն թէ՛ անոր — Վազը տեղագին
Կը ամսի զայն շուս — Եղբորն անդունդին,
Կըսն թէ՛ ինչու — Այսքան կ'արտայայ,
Շատեր կ'որան — Այս ճամբուն վերայ..
Կը հարցնեմ ես՝ — Կորուսաւ ինչէ՛ն,
Էն և անհունը — Զիրար կ'ընէն..
Բաժինն է մարդուն — Հաւածուիլ բաղդն,
Դուն յանդուզն եղիլ — Կամբը կը յաղթէ:
Քալէ՛ նաւակը իմ — Առաջ ընդմէջն,
Թող ծովուն քամիք — Շաշին շատունն:
Շատեր զըսան հոն — Մահը տիրազէմ,
Բայց, քիտցի՛ր, ես հոն — Լըստ պիտի գտնեմ:
Գ. Մ. ԱՐԱՍԵԱՆ

Փ Ա Ռ Ք Ի Զ Ա Ի Ա Կ Ն Ե Ր

ԳԼՈՒԽ Բ.

Ե Ր Ա Ժ Ի Շ՝Տ Ը

(Շար. տես. 1917 թգմ. էջ 844):

◁ ○ ▷

Մուսաներու Սիրենա, արուեստներու անդրանիկ, աննիւթականին վսեմ ժայն, բոլոր ժողովուրդներուն հասարակաց լեզու, աղբիւր մշտնջենաւոր ուրախութեան, մարդուն միակ իսկական ստեղծագործութիւն, արուեստ՝ որ կը կերպարանափոխուի՝ բայց չ'իյնար, ահա Երաժշտութիւնը: Հոն՝ ուր կը վերջանան նկարչութիւնը, քանդակագործութիւնն ու բանաստեղծութիւնը, կը սկսի ան՝ տեղափոխելով զմեզ զմայման սահմաններուն գերերկրեայ աշխարհի մը մէջ:

Երբ մեղեդիին ալիքը ծփալով կը պաշարէ զմեզ՝ ամէն գոհնիկ մտածութիւն կը վարատի, վստահութեամբ ամենատուր կ'ըլլանք այդ հրաւերին՝ ինչպէս սիրոյ հրապոյրի մը: Զկայ երաժշտութիւնէն անելի արուեստ մը, որ ազնուացնէ ու զաղափարականացնէ մեր զգացումները: Բանաստեղծութիւն, նկարչութիւն, քանդակագործութիւն, ստորակարգեալ են անոր յուզումներուն ուժգնութեամբ, զոր նա կարող է առաջ բերել:

Քիչ զբազաններ,՝ ամենասակաւ ընտրեալներ՝ կրնան ըսել՝ կարգաւով բերթուած մը, դիտելով նկար մը, արձան մը կամ տաճար մը՝ թէ՛ յափշտակուած են. շատեր ընդհակառակն իրենք իրենցմէ դուրս ելած են հրճուանքի աշխարհի մը մէջ՝ լսելով գեղեցիկ երաժշտութիւն մը:

Հարցուցէք կրօնական եռանդով գեղուն մարդիկներուն ու անոնք ձեզի պիտի ըսեն թէ՛ ինչպէս յաճախ իմացական արբեցութեամբ յափշտակուած են՝ լսելով հանդիսաւոր տոնախմբութեանց ընկերող երգչուներն մեղեդիները: